ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
BULLETIN OF THE ACADEMY OF SCIENCES OF THE ARMENIAN SSR

Բնական գիտություններ № 5—6, 1945 *Естественные науки*

Ս. Կարապետյան
ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԵՐԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ[1]

Այս տարի լրանում է Սովետական Միության Գիտությունների Ակադեմիայի 220-ամյակը։

Տաղանդավոր ռուս ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդները մեծագույն հրճվանքով են նշում այդ հոբելյանը։ Ռուսական և ապա ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան իր գոյության 220 տարիների ընթացքում անգնահատելի դեր է խաղացել ոչ միայն ռուս ժողովրդի ու Սովետական երկրի մյուս ժողովուրդների գիտական մտքի զարգացման գործում։ Մեծ է նրա դերը նաև համաշխարհային գիտության զարգացման գործում։

Հիմնադրվելով Պետրոս Մեծի կողմից 1724—25 թվականներին, Ռուսական Ակադեմիան իր գոյության ընթացքում անցել է իրոք որ փառավոր մի ուղի, միշտ հարազատ մնալով ժողովրդի շահերին ծառայելու իր կոչմանը։ Մեր մեծ հայրենիքը երբեք չի մոռանա այն ծառայությունները, որ Գիտությունների Ակադեմիան մատուցել է մեր անծայրածիր երկրի հարուստ ընդերքի ուսումնասիրության, նրա պարունակած անսահման հարստությունների հայտագործման ու շահագործման ասպարեզում, ռուս և սովետական մյուս ժողովուրդների կուլտուրայի զարգացման ասպարեզում։

Իր զարգացման ընթացքում շատ էտապներ է անցել Գիտությունների Ռուսական Ակադեմիան, սակայն նրա գործունեության ամենաբեղմնավոր էտապը սկսվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակից հետո, սովետական իշխանության տարիներին։

Գիտությունների Ակադեմիայի կյանքում պատմական նշանակություն ունեցավ Սովետական Կառավարության 1925 թ. որոշումը Գիտությունների Ռուսական Ակադեմիան ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիա վերանվանելու մասին, ինչպես նաև 1934 թ. որոշումը Ակադեմիան ՍՍՌՄ Ժողկոմսովետի իրավասությանը հանձնելու և այն Լենինգրադից Մոսկվա փոխադրելու մասին։ Խոշոր պետական նշանակություն ունեցող այդ որոշումը բխում էր Ակադեմիան կենտրոնական կառավարական օրգաններին մոտեցնելու, նրանց ավելի լավ սպասարկելու, ինչպես նաև իր՝ Ակադեմիայի աշխատանքներն ավելի բեղմնավոր դարձնելու անհրաժեշտությունից։

Եվ իրոք, այդ ժամանակից սկսած Ակադեմիան անմիջապես կապվեց ՍՍՌՄ Կառավարության հետ, մի օրգանի, որը ղեկավարում է երկրի ողջ

---

[1] *Զեկուցված է 1945 թ. հունիսի 8-ին ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հանդիսաւոր ժողովի նիստում՝ նվիրված ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի 220-ամյակին։*

տնտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքը, նրա սոցիալիստական շինարարությունը։ Կառավարությունն էլ իր հերթին հնարավորություն ստացավ ամենօրյա ղեկավարություն և օգնություն ցույց տալու Ակադեմիային։

Այն նոր խնդիրները, որոնք Ակադեմիայի առաջ ծառացան մեր երկրի սոցիալիստական վերակառուցման շրջանում, իրենց լիակատար արտահայտությունը գտան Գիտությունների Ակադեմիայի նոր կանոնադրության մեջ, որն ընդունվեց Ակադեմիայի 1935 թ. նոյեմբերյան սեսիայի կողմից և հաստատվեց Ժողկոմսովետի նույն թվի նոյեմբերի 23-ի որոշումով։ Այդ նոր կանոնադրությունը Սովետական Միության գիտական մտքի կենտրոնի առաջ խնդիր դրեց՝ Ակադեմիայի շուրջը համախմբել երկրի ականավոր գիտնականներին, հնարավորություն ստեղծել աճող երիտասարդ գիտնականների գիտական գործունեության ծավալման համար, ուսումնասիրել և զարգացնել համաշխարհային գիտական մտքի նվաճումները, հետևողականորեն օգտագործել գիտության նվաճումները նոր, անդասակարգ սոցիալիստական հասարակակարգի ստեղծմանը նպաստելու համար, ուսումնասիրել երկրի բնական հարստություններն ու արտադրողական ուժերը և նպաստել դրանց ռացիոնալ ու նպատակահարմար օգտագործմանը, ուսումնասիրել մարդկության կուլտուրական ու տնտեսական նվաճումները և նպաստել դրանց ժամանակին ու ռացիոնալ ձևով օգտագործելուն սոցիալիստական հասարակության կառուցման գործում։ Ընկեր Մոլոտովը նոր կանոնադրությունը հաստատելու կապակցությամբ ունեցած իր ելույթում այսպես գնահատեց նրա նշանակությունը. «Ակադեմիայի ընդունած նոր կանոնադրությունը աչքի է ընկնում իր կառուցվածքի պարզությամբ և ձևական մանրամասնությունների բացակայությամբ. նոր կանոնադրության առավելությունն այն է, որ նա ամբողջովին իսկական Սովետական Ակադեմիայի կանոնադրություն է, որ նա ազատում է Ակադեմիան մի շարք արխայիկ մնացուկներից։ Բանը նրանումն է, որ Գիտությունների Ակադեմիան դառնում է սովետական գիտության իսկական կենտրոն, ինչպիսին մինչև այսօր չի եղել...

Մենք ուզում ենք, որպեսզի Գիտությունների Ակադեմիան կատարի կանոնադրության մեջ նշված խնդիրը—նպաստի տեսական, իսկ դրա հետ միասին նաև կիրառական գիտությունների զարգացմանը ՍՍՌՄ-ում և մոտիկից կապվի երկրի սոցիալիստական շինարարության կարիքների հետ»։

Այդ ժամանակից անցել է տասը տարի։ Մենք գոհունակությամբ կարող ենք նշել, որ Գիտությունների Ակադեմիան պատվով է կատարել իր առաջ դրված այդ պատասխանատու և շնորհակալ խնդիրները։ Ակադեմիայի ինստիտուտներում և լաբորատորիաներում ներկայումս աշխատում են մոտ 10.000 գիտ. աշխատակիցներ, ակադեմիկոսներ, թղթակից անդամներ։

Այդ տարիներն առանձնապես բեղմնավոր էին միութենական ռեսպուբլիկաներում գիտական օջախներ ստեղծելու տեսակետից։

Իրականացնելով Սովետական կառավարության և բոլշևիկյան պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, Գիտությունների Ակադեմիան, նրա ներկայիս պրեզիդենտ ակադեմիկոս Կոմարովի ակտիվ նախաձեռնությամբ, ձեռնամուխ է լինում ազգային ռեսպուբլիկաներում, երկրի տարբեր ծայրերում Միութենական Գիտությունների

Ակադեմիայի մասնաճյուղեր և բազաներ ստեղծելու գործին։ Եվ ահա մեկը մյուսի հետևից բացվում են ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիայի մասնաճյուղեր (ֆիլիալներ)՝ Վրաստանում, Ադրբեջանում, Հայաստանում, Ղազախստանում, Տաջիկստանում, Ուզբեկստանում. Ակադեմիայի բազաներ և հենակետեր են ստեղծվում հեռավոր հյուսիսում, Ուրալում, Հեռավոր Արևելքում ու երկրի այլ մասերում։

Անցած տասնամյակի ընթացքում այդ երիտասարդ գիտական հաստատությունները մի կողմից մեծ ծառայություններ մատուցեցին սովետական առաջավոր գիտության զարգացման գործին, Ակադեմիայի հեղինակության ամրապնդման գործին, իսկ մյուս կողմից՝ աստիճանաբար աճելով, իրենք վերածվեցին գիտական մտքի կենտրոնների ազգային ռեսպուբլիկաներում։ Միութենական մի շարք ռեսպուբլիկաներում՝ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի ֆիլիալների բազայի վրա, վերջին տարիների ընթացքում ստեղծվեցին ինքնուրույն ռեսպուբլիկական Գիտությունների Ակադեմիաներ, ինչպես, օրինակ, Վրաստանում (1941 թ.), Ուզբեկստանում (1943 թ.), Հայաստանում (1943 թ.), Ադրբեջանում (1945 թ.)։

Այսպիսով՝ Ուկրաինական, Բելոռուսական Ակադեմիաների շարքին ավելացան Վրաստանի, Հայաստանի, Ուզբեկստանի, Ադրբեջանի և Լատվիայի Ակադեմիաները՝ իրենց մի քանի տասնյակ ինստիտուտներով, լաբորատորիաներով, բազմաթիվ ազգային գիտական կադրերով։ Դա լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության մի իսկական տրիումֆ է, որը կարող էր իրականանալ միայն սովետական կարգերի շնորհիվ, բոլշևիկյան պարտիայի իմաստուն ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ։

Ես ցանկանում եմ առանձնապես նշել Սովետական Միության Գիտությունների Ակադեմիայի դերը գիտության զարգացման գործում մեզ մոտ Սովետական Հայաստանում։

Ինչպես հայտնի է, մինչև 1935 թիվը Հայաստանում չկար այնպիսի միասնական գիտական մի կենտրոն, որը կարողանար իր շուրջը համախմբել Հայաստանի գիտական կադրերը, միավորեր առանձին գիտա-հետազոտական հիմնարկները և պլանային, գիտական աշխատանք ծավալեր Ռեսպուբլիկայի մասշտաբով, օգտագործելով գիտության նվաճումները երկրի սոցիալիստական վերակառուցմանը նպաստելու համար։ Կարող են հարցնել՝ հապա Պետական Համալսարանը, Կուլտուրայի և Գիտության ինստիտուտը։ Պետք է ասել, որ այդ հաստատությունները միայն մասամբ կարող էին կատարել նշված խնդիրը, քանի որ Պետական Համալսարանը նախ և առաջ բարձրագույն ուսումնական հաստատություն է և նրա հիմնական խնդիրը բարձրորակ կադրերի պատրաստումն է, իսկ Կուլտուրայի և Գիտության ինստիտուտը սահմանափակված էր միայն հումանիտար գիտությունների ճյուղերով։ Ահա թե ինչու Ռեսպուբլիկայում միասնական գիտական մի կենտրոնի ստեղծումը, որն ընդգրկեր գիտության բոլոր ճյուղերը, հրամայական անհրաժեշտություն էր դարձել։

Ելնելով ահա այդ անհրաժեշտությունից, 1935 թ. Հայաստանում հիմնադրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալ, որի առաջին ղեկավար է նշանակվում ականավոր ռուս գիտնական, ակադեմիկոս Լեվինսոն-Լեսինգը։ Առաջին շրջանում կազմակերպվում են գեոլոգիական, քիմիական, բիոլոգիական ինստիտուտներ, հողագիտական և հնագիտական

սեկտորներ, իսկ Ավանում, մի ամայի տեղամասում դրվում է բուսաբանական այգու հիմքը։

Ինչպես դժվար չէ նկատել, նորաստեղծ ֆիլիալը շատ թույլ էր հումանիտար գիտությունների ճյուղերով. բացառությամբ հնագիտական փոքրիկ սեկտորի, այդ գիտությունները ներկայացված չէին ֆիլիալում, իսկ մասնավորապես Հայաստանի պայմաններում, իր հարուստ պատմական, կուլտուրական անցյալով, դա շատ լուրջ բաց էր։ 1938 թ. այդ հանգամանքի վրա ինչպես ֆիլիալի ղեկավարությունը ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու գլխավորությամբ, այնպես էլ Հայաստանի կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին և միջոցառումներ ձեռնարկեցին այդ բացը լրացնելու համար։

Այդ միջոցառումների հետևանքով 1938—39 թվականներին վերջնականապես ավարտվում է Հայկական ֆիլիալի կազմակերպական ձևավորման շրջանը։ 1939 թ. ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալն արդեն հանդիսանում էր մի լիարյուն, կենսունակ, բազմաճյուղ գիտական հաստատություն, որն իրավամբ կարող էր կոչվել ՀՍՍՌ գիտական մտքի կենտրոն։ 1940 թվականին նշվեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի գոյության 5-ամյակը, որ համընկավ Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին։ Ֆիլիալի հոբելյանական սեսիային մասնակցեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հատուկ դելեգացիան՝ Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ակադեմիկոս Զուգակովի գլխավորությամբ և ակադեմիկոսներ՝ Օրբելու, Գրեկովի, Լիսենկոյի, Վոլգինի և մյուսների մասնակցությամբ։

Իր ողջույնի խոսքում ակադեմիկոս Զուգակովը նշեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի խոշոր նվաճումները պատմական, երկրաբանական, բուսաբանական և կենդանաբանական գիտությունների ասպարեզում, և միաժամանակ խնդիր դրեց զարկ տալ տեխնիկական և քիմիական գիտությունների զարգացմանը։

Այդ ժամանակ Հայկական ֆիլիալը իր կազմում արդեն ուներ 6 ինստիտուտ—Բիոլոգիական ինստիտուտ՝ 3 սեկտորներով, Քիմիական ինստիտուտ՝ 2 սեկտորներով, Երկրաբանական ինստիտուտ՝ 4 սեկտորներով, Բուսաբանական ինստիտուտ՝ Բուսաբանական այգի Երևանում, իր բաժանմունքով՝ Կիրովականում, Պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտ՝ 2 սեկտորներով, Լեզվի ու գրականության ինստիտուտ, Պատմական Թանգարան, Աստղադիտարան, Հիդրո-բիոլոգիական կայան Սևանում, Հողագիտության սեկտոր, Սեյսմիկ կայան և Կենտրոնական գրադարան՝ իր բաժանմունքներով։ Ֆիլիալն ուներ իր սեփական տպարանը և հրատարակչական բաժինը։

Հետաքրքիր պատկեր է ներկայացնում գիտական աշխատողների թվի աճումը Հայկական ֆիլիալում այդ տարիների ընթացքում։

1935 թ. ֆիլիալում աշխատում էին ընդամենը 58 գիտ. աշխատակիցներ, մինչև 1937 թ., երկու տարվա ընթացքում, գիտ. աշխատակիցների թիվը ոչ միայն չավելացավ, այլ, ընդհակառակը, պակասեց 3 հոգով. 1937 թ. վերջին ֆիլիալն ուներ ընդամենը 55 գիտ. աշխատակից, այդ թվում 6-ը պրոֆեսոր և 9-ը՝ գիտությունների թեկնածուներ, իսկ 1939 թվի վերջին գիտական աշխատակիցների թիվը ֆիլիալում հասավ 156-ի, որից 3

ակադեմիկոսներ, 13 պրոֆեսոր-դոկտորներ, 37 գիտությունների թեկնածուներ։ Միայն 2 տարվա ընթացքում, 1938—1939 թվերին, ֆիլիալի գիտ. աշխատողներից 20 մարդ պաշտպանեցին թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ։

Ֆիլիալում կազմակերպվեց հատուկ ասպիրանտուրա, ասպիրանտների թիվը 1939 թ. հասավ 30-ի։

Ես անհրաժեշտ եմ համարում նշել ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի կողմից Հայկական ֆիլիալին ցույց տրված խոշոր օգնությունը նյութա-տեխնիկական բազան ամրապնդելու, ինստիտուտները և լաբորատորիաները գիտական սարքավորումով ապահովելու ուղղությամբ, մեր գրադարանները հայրենական և արտասահմանյան գիտական գրականությամբ հարստացնելու տեսակետից։

Առանց չափազանցության կարելի է ասել, որ Միութենական Ակադեմիան և նրա ղեկավարությունը ոչինչ չէին խնայում Հայաստանում գիտական մտքի զարգացման համար, Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալը անընդհատ ամրապնդելու և աճեցնելու համար։ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի մի շարք իսկական անդամներ—երկրի աչքի ընկնող գիտնականներ՝ անմիջական կապ հաստատեցին մեր ֆիլիալի ինստիտուտների հետ և ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում այդ ինստիտուտների գիտա-հետազոտական աշխատանքներում. դրանց թվում էին ակադեմիկոսներ Լեվինսոն-Լեսինգը, Կոմարովը, Ցոֆեն, Գրեկովը, Լիսենկոն, Լևոն և Հովսեփ Օրբելիները ու մի շարք այլ գիտնականներ։

Միութենական գիտական կենտրոնի հետ ստեղծված այդ սերտ կապը շատ բեղմնավոր հետևանք ունեցավ մեր ռեսպուբլիկայում գիտական մտքի զարգացման համար։ Հայաստանի բազմաթիվ երիտասարդ գիտական կադրեր հնարավորություն ստացան Ակադեմիայի կենտրոնական ինստիտուտներում բարձրացնելու իրենց գիտական մակարդակը և օգտվելու ականավոր գիտնականների հեղինակավոր կոնսուլտացիաներից։

Ակադեմիայի Հայկական ֆիլիալը իր հերթին նպաստեց Ռեսպուբլիկայում եղած մյուս գիտա-հետազոտական հիմնարկների գործունեության տեսական և իդեական մակարդակի բարձրացմանը։

Մնվելով սովետական առաջավոր գիտության ակունքներից, գիտական մտքը Հայաստանում աճեց, փարթամացավ և կանգնեց զարգացման լայն ճանապարհի վրա։ Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի և Կառավարության ամենօրյա հոգատարությունը և ուշադրությունը խրախուսում ու մղում էին մեզ նորանոր նվաճումների և համարձակ հետազոտությունների։ Այսպիսով՝ աղյուս աղյուսի հետևից դրվում էր ՀՍՍՌ ապագա Գիտությունների Ակադեմիայի հիմքը։ Արդեն 1940—41 թվականներին նշմարվում էին ապագա Ակադեմիայի կոնտուրները։ Այդ միտքը ոգևորում ու անձնվեր աշխատանքի էր մղում ոչ միայն Հայաստանի գիտական աշխատողներին, այլ նաև մեր ողջ ինտելիգենցիային, մեր Ռեսպուբլիկայի աշխատավորական լայն մասսաներին։

Ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը մեր Հայրենիքի վրա ժամանակավորապես հետաձգեց այդ վեհ նպատակի իրագործումը, բայց նա չկարողացավ և չէր կարող խափանել նրա կենսագործումը։ Հայ ժողովուրդը, նրա անձնվեր ինտելիգենցիան մահու և կենաց պայքարի ելան

իրենց դարավոր թշնամու՝ գերմանական իմպերիալիզմի դեմ և իրենց հերոսական պայքարով Հայրենական պատերազմի ճակատներում ու անձնազոհ աշխատանքով թիկունքում արժանացան Սովետական Կառավարության բարձր գնահատականին։ Եղբայրական ժողովուրդների սիրուն ու համակրանքին։ Ահա թե ինչու Հայաստանի Կառավարությունը հնարավոր համարեց անգամ պատերազմի պայմաններում հարց բարձրացնել Միութենական Կառավարության և Գիտությունների Ակադեմիայի առաջ Հայաստանում Գիտությունների Ակադեմիա ստեղծելու մասին։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան լիովին պաշտպանեց Հայկական ֆիլիալի բազայի վրա Ռեսպուբլիկայում Գիտությունների Ակադեմիա ստեղծելու մասին առաջարկը։ ՍՍՌՄ Ժողկոմսովետը և Հայաստանի Կառավարությունն ընդունեցին համատեղ որոշում։ 1943 թվականի նոյեմբերի 29-ի պատմական օրը Երևանում տեղի ունեցավ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բացումը։

Մեր Ակադեմիան ծնվեց մեր Մեծ Հայրենիքի կողմից գերմանական ֆաշիզմի դեմ մղվող կատաղի պայքարի օրերին։ Այդ պատմական փաստը մի նոր ապացույց է Սովետական պետության ուժի և հզորության։

Սովետական իշխանությունը ոչ միայն կործանումից փրկեց հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրան, ոչ միայն վերածնեց նրա լավագույն տրադիցիաները, այլև օգնեց մեր կուլտուրայի ու գիտության հետագա զարգացմանն ու բարգավաճմանը։ Մեր ժողովրդի կուլտուրայի վերածնության և զարգացման գործում անգնահատելի է եղբայրական ռուս մեծ ժողովրդի դերը։ Հայաստանում գիտական մտքի զարգացման գործում շատ մեծ է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի դերը։ Ի նշան այդ երախտագիտության՝ Հայկական Ակադեմիայի Ընդհանուր ժողովը իր անդրանիկ նիստում Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, ռուս ականավոր գիտնական Վ. Լ. Կոմարովին։ Շուտով կլրանա մեր Ակադեմիայի կազմակերպման երկու տարին։ Այդ կարճ ժամանակամիջոցում նա աճեց և դարձավ Հայաստանի գիտական մտքի իսկական կենտրոն՝ իր 20 ինստիտուտներով, 7 այլ գիտական հիմնարկներով, մի շարք գրադարաններով, լաբորատորիաներով, մոտ 600 գիտական աշխատողներով, այդ թվում 22 ակադեմիկոսներ, 40 դոկտորներ ու պրոֆեսորներ, 170 գիտությունների թեկնածուներ ու ավագ գիտական աշխատողներ, մոտ 58 ասպիրանտներ։ Եվ այսօր, գիտության այս մեծ տոնի օրերին, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի 220-ամյա հոբելյանի օրերին, Հայկական Ակադեմիան իր հազարանոց կոլեկտիվով, Հայաստանի բոլոր գիտական աշխատողների հետ միասին, իր ջերմագին ողջույնն է հղում մեր Մեծ Հայրենիքի գիտական մտքի գլխավոր շտաբին, սովետական ժողովուրդների սերն ու համակրանքը վայելող մեր պանծալի Ակադեմիային։

Ամբողջ սրտով ցանկանում ենք սովետական առաջավոր գիտության կոթողին, նրա անխոնջ մշակներին նորանոր հաջողություններ ի բարօրություն մեր Մեծ Հայրենիքի, հանուն մեր Սովետական պետության ուժի և հզորության հետագա ամրապնդման, հանուն սովետական առաջավոր գիտության հետագա ծաղկման ու բարգավաճման։